ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2017թվականի N 1-Ա

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է հաստատել Կոշ համայնքի ավագանու 2017 թվականի հունվար 25-ի թիվ 1 նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 2017թ-ի բյուջեն հաստատելու մասին:
2. ՀՀ Արագածոտնի մարզի Կոշի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ներին աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Արագածոտնի մարզի Կոշ գյուղական համայնքի ղեկավարի 2017թ-ի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:
4. ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի տարածքում օրենքով սահմանված 2017թ-ի տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. 200-0108 ծածկագրից 2.0 հա արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքը վարձակալության մրցույթի ներկայացնելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱՋՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2017թվականի N 2-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ_Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3/ կետով, 55-րդ հոդվածներով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 2017թ-ի բյուջեն համաձայն հավելվածի /կցվում է հավելվածի /:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2017թվականի N 3-Ա

ԿՈՇԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Կոշի համայնքապետարանի աշխատակազմի և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը /համաձայն հավելված 1/:

2.Հաստատել Կոշ համայնքի ենթակայության Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի աշխատակազմի և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը /համաձայն հավելված 2/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱՋՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

Հավելված 1

ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի ավագանու

2017թ-ի հունվարի 25-ի թիվ 2-Ա որոշման

Կոշի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը-15

Հաստիքի անվանումը	Ծածկագիրը	Հաստիքային միավորը	Դրույքաչափը /ՀՀ դրամ/ 2016թ	Դրույքաչափը /ՀՀ դրամ/ 2017թ
Համայնքի ղեկավար		1	220 000	220 000
Համայնքի ղեկ. տեղակալ		1	176 000	176 000
Համայնքի ղեկ. օգնական		1	133 000	133 000

Համայնքային ծառայության պաշտոնները

Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	176 000	176 000
Առաջատար մասնագետ	3.1-1	1	133 000	133 000
Առաջատար մասնագետ	3.1-2	1	133 000	133 000
Առաջատար մասնագետ	3.1-3	1	133 000	133 000
Առաջատար մասնագետ	3.1-4	1	133 000	133 000
Առաջատար մասնագետ	3.1-5	1	133 000	133 000

Տեխ. սպասարկման անձնակազմ

Գրաս. վարիչ		0.5	120 000	120 000
Գրադարանավար		0.5	120 000	120 000
Կուլ. տան պահակ		1	72751	--
Ջրամբ. պահակ		1	72 751	72 751
Հավաքարար		1	77 903	77 903
Խմելաջրի փականագործ		2	160 000	160 000
Հարկահավաք		0.5	100 000	100 000
ընդամենը			2093405	2020654

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի ավագանու

2017թ-ի հունվարի 25-ի թիվ 3-Ա որոշման

Կոշի արվեստի դպրոցի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը-9

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը-8.5

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Ամսական վճարը 2016թ	Ամսական վճարը 2017թ
1	Տնօրեն	1	72 751	72 751
2	Ուսմասվար	1	72 751	77903
3	Հաշվապահ	0.5	72751	36376
4	Հավաքարար	1	72 751	72 751
5	Ուսուցիչ	1	77 903	77 903
6	Ուսուցիչ	1	77 903	77 903
7	Ուսուցիչ	1	77 903	77 903
8	Ուսուցիչ	1	77 903	77 903
9	Պահակ	1	72751	72751
Ընդամենը		8,5	602616	644144

ԿՈՇԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4-Ա

ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Կոշ համայնքի ղեկավարի 2017թ-ի ամսական դրույքաչափը 220000 /երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ 2017Թ_Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18/ կետով և «Տեղական տուրքերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի տարածքում օրենքով սահմանված 2017թ-ի տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը համաձայն հավելված 3-ի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱՋՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Կոշ համայնքի ավագանու 2017թ.-ի հունվարի 25-ի

5-Ա որոշման

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնքում սահմանվել է տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն կետի ,ա ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար մեկ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև հինգ հազար դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ.

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի 666օբյեկտի համար՝ տաս հազար մեկ դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար մեկ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կոշ, (093)784141, kosh.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20_րդ/ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1/ ենթակետով Կոշ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 201-0108 ծածկագրից 2.0 հա արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքը ներկայացնել վարձակալության մրցույթի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ԼԻՊՈՒՇ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՆԵԼ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋԻՎԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱԿՈԲ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**